ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հայեցի դաստիարակության դերը կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործում

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Անահիտ Աղաբեկյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրվում է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Հերմինե Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3
2. Հայեցի դաստիարակության դերը կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործում……4
3. Հայրենասիրության դաստիարակումը մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի կենսագործմամբ……..8
4. Եզրակացություններ……13
5. Օգտագործած գրականության ցանկ……..14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Վերջին ժամանակներս զգալի աշխատանք է կատարվել դպրոցում դասին ներկայացվող ժամանակակից պահանջները փոփոխելու, ուսուցման գործընթացում նոր ու արդյունավետ մեթոդներ կիրառելու ուղղությամբ: Ավելի հաճախ են կազմակերպվում դասապրոցեսներ, որտեղ համակցվում են ուսուցման արդյունավետ մեթոդներ և գործադրվում են նոր ու արդյունավետ հնարներ, որոնք մեծապես նպաստում են ուսումնական խնդիրների կենսագործմանը և առաջին պլան են մղում դասապրոցեսի առաջնակարգ պահանջները: Դպրոցի նպատակը պետք է լինի առողջ, գեղեցիկ, հոգով հարուստ, հայրենասեր, գրագետ մարդկանց ձևավորումը,որոնք ունենան ազատ արտահայտվելու սեփական կարծիք, ամուր կամք, բարձր բարոյական հատկանիշներ՝ աշխատասիրություն, մարդասիրություն, գթասրտություն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ հայեցի դաստիարակության դերը կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործում:

Նպատակից ելնելով՝ **առանձնացրել ենք հետևյալ խնդիրները՝**

- ցույց տալ միջոցներ՝ հայեցի ճիշտ դաստիարակության համար,
- վերլուծել հայրենասիրության դաստիարակումը մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի կենսագործմամբ:

Հասարակության այս դժվար ժամանակահատվածում հայոց պետականության ամրապնդման եղանակով անհրաժեշտ է դպրոցի կրթության ու դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը: Նախապատրաստել մի այնպիսի սերունդ, որն ունենա ազգային նկարագիր և հայեցի մտածողություն:

Հետազոտության տեսական նշանակությունն է ցույց տալ, որ կրտսեր դպրոցականի դաստիարակության հիմքը հայրենասիրական դաստիարակությունն է:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մանկավարժական մտքի ձևավորման ու զարգացման ժամանակաշրջանում ձևավորում ու զարգացում են ապրել նաև ազգային դաստիարակությանը նվիրված մտքերն ու հայացքները:

Բոլոր ազգերի դաստիարակությունն ունի ընդհանուր օրինաչափություններ, սակայն ազգային առանձնահատկությունները, լեզուն և մշակույթը ինչ-որ տարբերություններ են ստեղծում յուրաքանչյուր ազգի դաստիարակության բովանդակության ձևերի ու մեթոդների ոլորտներում:

Ամեն մի ժողովուրդ ունի մարդու իր իդեալը, որը նա իրականացնում է դաստիարակության ազգային համակարգով:

Հայ մանկավարժական գիտության մեջ ազգային դաստիարակության հայացքների համակարգում արդեն օգտագործվում է հայեցի հասկացությունը: Հայեցի դաստիարակություն ասելով պետք է հասկանալ ազգային արժեքային համակարգի փոխանցումը նոր սերնդին:

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման ու զարգացման համար: Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում,երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Սովորողների արժեհամակարգի ձևավորման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են: Այն վերահսկելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, պատասխանատվության զարգացում, ինքնուրույնություն և այլն:

Քանի որ երեխան դեռևս չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Այս առումով մեծ է զանգվածային տեղեկատվական միջոցների դերը, որոնցում ներկայացվող ոչ ճիշտ հայերենը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կայքերում հակազգային արժեքներ քարոզող նյութերը իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխաների արժեհամակարգի ձևավորման վրա: Արժեհամակարգի ձևավորման ու պահպանման գործընթացում ընտանիքից բացի դպրոցն է այն հիմնական միջավայրը, ուր կոփվում են ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը:

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժի ուշադրության կենտրոնում: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության կարևոր պայմաններից են:

Հայերենի ուսուցման գործընթացում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր ուսումնադաստիարակչական նպատակը:

Մայրենիի ուսուցման նպատակները բազմազան են: Նրանցից մեկը աշակերտներին ազգային արժեքներով զինելն է: Հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանը, խոսելով ազգային ավանդույթների դաստիարակչական նշանակության մասին գրում է, որ ուսուցումը և դաստիարակությունը պետք է համապատասխանեն ժողովրդի ոգուն, վիճակին և պահանջմունքներին: Հետևաբար ազգային արժեքներն այն էական գործոններից մեկն է, որով պիտի պայմանավորվի նոր սերնդի դաստիարակության գործընթացը:

Որպես կարևորագույն ազգային արժեք՝ ավանդույթները հիմք են հանդիսանում երեխաների համակողմանի զարգացման համար, ձևավորում են հասունացող սերնդի հոգեկերտվածքը: Ավանդույթն այն կարևորագույն կատեգորիաներից է, որն առկա է բոլոր ոլորտներում՝ նյութական, քաղաքական, գեղարվեստական, բարոյական, կրթական և այլն: Ազգային ավանդույթները բավականին հարուստ ու ինքնատիպ են:

Դրանցից են պատմական զրույցները, ժողովրդական բանահյուսությունը, ծեսերը, տոները և այլն։

Հայ ժողովուրդը պատմական երկարատև զարգացման ճանապարհին մշակել և արմատավորել է իրեն բնորոշ ավանդույթներ, առօրյա կյանքի կանոններ, նորմեր, որոնք փոխանցելով սերնդեսերունդ, դարձել են ազգային ավանդույթ և օգտագործվում են որպես նոր սերնդի դաստիարակության կարևոր միջոց։

Անձի հայեցի դաստիարակության համար կարևոր է հայրենասիրությունը։Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է, որի հիմնական բաղադրիչը սերն է։ Մարդու հայրենասիրությունը մարմնավորվում է հայրենիքի հանդեպ ունեցած սիրո մեջ։ Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի։ Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա։ Նշանակում է, որ հայրենիքից ու նրա ժողովրդից թանկ ոչինչ չկա։ Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամաբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ Հայրենիք»։ Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, բակից, մի թիզ հողից, ջրից ու իր մայրենի լեզվից։

Ուսուցիչները դեռ կրտսեր դպրոցական տարիքից պարտավոր են երեխաների մեջ ձևավորել հայրենասիրական զգացմունքներ։ Երեխան պետք է հոգատար վերաբերմուք ցուցաբերի հայրենիքի պատմության, մշակույթի, իր ժողովրդի,ավանդույթների, սովորույթների նկատմամաբ։

Հայեցի դաստիարակության կարևոր բաղադրիչներից է գեղագիտական դաստիարակությունը։ Դա արժեհամակարգի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ գործընթաց է։ Ընտանիքը և դպրոցը հանդիսանում են սովորողների գեղագիտական և բարոյական դաստիարակության կարևոր օղակները։ Խ. Աբովյանը գտնում էր, որ երեխայի ձևավորման հիմնաքարը դրվում է ընտանիքում, սակայն այն լիարժեքություն է ձեռք բերում դպրոցական միջավայրում։ Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է։ Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է։ Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական զգացմունքները, ճաշակը,

իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները։Գեղագիտական դաստիարակությունը մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է։ Մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը։ Այս տեսակետից գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար։ Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը։

Ուսուցիչները երեխաներին պետք է սովորեցնեն բարոյական սկզբունքներ։Բարոյական վարքի ընկալումը և ճիշտ գործելու ունակությունը մեծապես կախված են այն միջավայրից, որտեղ երեխան մեծանում է։ Երեխայի մեջ պետք է սերմանեն բարոյականության ճիշտ և սխալ մտադրությունների, մտքերի, գործողությունների և պահվածքի միջև տարբերությունը տեսնելու ունակություն։

Ուշինսկին դաստիարակության տարբեր կողմերի շարքում գլխավոր տեղը հատկացնում է բարոյական դաստիարակությանը։ Ըստ նրա բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, կարգապահություն և պատասխանատվության զգացում։

Հայրենասիրության դաստիարակումը մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի կենսագործմամբ

Աճող սերնդի դաստիարակության բաղադրամասերի ընդհանուր համակարգում վճռական դեր է կատարում բարոյական դաստիարակությունը:

Բարոյական դաստիարակությունը նպատակ ունի ձևավորելու ու զարգացնելու աշակերտների բարոյական գիտակցությունն ու համոզմունքները, բարոյական զգացմունքներն ու իդեալները, նրանց մեջ մշակելու ապագա կերտող քաղաքացուն հատուկ բարոյական վարքի անհրաժեշտ հմտություններ ու սովորություններ և այլն: Բարոյական դաստիարակության հիշատակված և այլ խնդիրների համակարգում շատ կարևոր է հայրենասիրության, ընկերասիրության, մարդասիրության, խղճի, պարտքի ու բարոյական մյուս զգացմունքների դաստիարակությունը:

Դպրոցականներին հայրենասիրության ոգով դաստիարակելուն մեծապես նպաստում են բազմաթիվ գործոններ, որոնց համակարգում առաջնակարգ դեր են կատարում հատկապես բոլոր ուսումնական առարկաներն ու նրանց միջառարկայական կապերը:

Առաջնորդվելով դաստիարակող ուսուցման սկզբունքով (ուսուցանելիս միաժամանակ դաստիարակում ենք) անխտիր բոլոր առարկաների ուսուցիչներն էլ լայն հնարավորություններ ունեն իրենց սաների մեջ ջերմ հայրենասիրություն դաստիարակելու նպատակով արդյունավետ օգտագործելու ոչ միայն ծրագրային ուսուցվող նյութերը, այլև իրենց կողմից ավանդվող առարկայի գծով միջառարկայական բազմապիսի կապերը (հարակից կամ ոչ հարակից առարկաների միջև):

Կանգ առնենք մայրենի լեզու առարկայի ընձեռող լայն հնարավորությունների վրա, քանի որ քննարկվում են այդ առարկայի միջառարկայական կապերը:

Հայրենասիրության դաստիարակության հզոր միջոց է <u>մայրենի լեզուն</u>, որը ոչ միայն առանձին ուսումնական առարկա է, այլև մյուս առարկաների ավանդման հիմնական միջոց: Մյուս ուսումնական առարկաների հետ սերտ փոխկապակցությամբ մայրենի լեզվի կրթադաստիարակչական հսկայական դերը

շատ լավ է բնութագրել Կ.Դ. Ուշինսկին իր <<Մայրենի լեզու>> ուշագրավ հոդվածում: <<Մայրենի լեզվի մեջ,-գրում է նա,- շունչ ու հոգի են առնում ամբողջ ժողովուրդը, նրա ողջ հայրենիքը. նրա մեջ ժողովրդական ոգու ստեղծագործ ուժով մտքի, պատկերի և հնչյունի են փոխակերպվում հայրենիքի երկինքը, նրա օդը, ֆիզիկական երևույթները, նրա կլիման, նրա դաշտերը, լեռներն ու հովիտները, նրա անտառներն ու գետերը, նրա մրրիկներն ու ամպրոպները՝ հայրենի բնության այն ամբողջ խոր մտքերով ու զգացմունքներով լի ձայնը, որ բարբառում է այնպես բարձրագոչ՝ մարդու սիրտ մասին դեպի իր հայրենիքը, սեր, որն այնպես հստակ է արտահայտվում մայրենի երգի մեջ, մայրենի եղանակներում, ժողովրդական բանաստեղծների շուրթերին: Սակայն ժողովրդական լեզվի պայծառ, վճիտ խորքերում արտահայտվում է ոչ միայն մայրենի երկրի բնությունը, այլև ժողովրդի հոգևոր կյանքի ամբողջ պատմությունը>>:

Մայրենի լեզուն է, որ ամրակայում, սրբությամբ է պահում ու հաջորդ սերունդներին հանձնում տվյալ ժողովրդի հոգևոր կյանքի այդ ամբողջ պատմությունը, դրանով իսկ կատարում ազգապահպանման ու հայրենասիրական իր վսեմ դերը:

Ազգապահպանման ու հայրենասիրական նման վիթխարի դեր է կատարել նաև հայոց լեզուն: Շատ կարևոր է պատմության միջառարկայական կապերի օգտագործմամբ ցույց տալ, թե բանաստեղծ Հովհաննես Թումանյանի բառերով <<ջարդարար ռիմակները>> քանի՞-քանի՞ անգամ են <<զարկված ու զրկված>> <<ողբի ու որբի հայրենիք>>-ի պատճառ դարձել (բանաստեղծությունը կարելի է ընթերցել Մեծ Եղեռնին նվիրված դասաժամի ընթացքում), բայց հայ ժողովուրդը միշտ էլ իր մեջ հոգու արիություն և կամքի մեծ ուժ է գտել և սրբությամբ պաշտպանելու պահպանել հայրենիքը, իր մայրենի լեզուն, իսկ լեզվի միջոցով՝ իր բազմադարյան հարուստ մշակույթի գանձերը:

Մայրենի լեզուն անքակտելի կապերի մեջ է ամենից առաջ հայ գրականության հետ: Մ.Գորկու բնորոշմամբ <<գրականության հիմնական նյութը բառն է, որը ձևավորում է մեր մեջ մեր բոլոր տպավորությունները, զգացմունքները, մտքերը. գրականությունը բառի միջոցով պլաստիկ պատկերման արվեստ է>>: Ճիշտ է, որպես ուսումնական առարկայի՝ գրականության ուսուցումն սկսվում է չորրորդ

դասարանից, սակայն գաղտնիք չէ այն, որ գրական ստեղծագործությունների հիման վրա երեխաները մայրենի լեզու են սովորում ոչ միայն տարրական դասարաններում, այլև վաղ մանկության շրջանում՝ ընտանիքում և մանկապարտեզներում: Ի դեպ, տարրական դասարանների <<Մայրենի լեզվի>> դասագրքերում զետեղված գրական շատ ստեղծագործություններ զուտ կրթական դերի հետ միասին մեծապես նպաստում են նաև կրտսեր դպրոցականների բարոյական ու գեղագիտական զգացմունքների դաստիարակությանը:

Ներկա դեպքում դասագրքերում զետեղված մեր հայրենիքին, հայրենի բնությանը նվիրված, հերոսապատում և այլ թեմատիկ բովանդակությամբ գրական ստեղծագործություններն ակտիվ դեր են կատարում կրտսեր դպրոցականներին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում:

Քանի որ գրականության հիմնական օբյեկտը հասարակական մարդն է իր բազմաբովանդակ կյանքով, արարքներով, խոհերով ու զգացումներով, ապա մարդու կերպարը կազմում է գրական երկի հիմնական բաղադրամասը: Հենց գրական դրական հերոսների գեղեցիկ արարքներն են, որ ընդօրինակման առատ նյութ են տալիս մանուկ և պատանի ընթերցողներին: Հաճախ գրական հերոսն իր հայրենասիրական արարքներով ընթերցողի համար դառնում է բարոյական իդեալ՝ կատարելով յուրօրինակ դաստիարակի դեր:

Հայտնի է, որ մայրենի լեզվի դպրոցական ծրագրով նախատեսված բազմաթիվ գրական երկեր ունեն <u>պատմական հենք.</u> Էլ չենք խոսում <<Սասունցի Դավիթ>> անզուգական էպոսի և հայ ժողովրդական բանահյուսության այն հերոսապատում նմուշների մասին, որոնց ծանոթանում են դպրոցականները մայրենի լեզվի դասերին:

Ուսուցիչը հայրենասիրության դաստիարակման ժամանակ լայն հնարավորություններ ունի միջառարկայական կապեր ստեղծելու դպրոցում ավանդվող կերպարվեստի (ասենք՝ պատմական թեմայով նկարչական կտավների օգտագործում), երգ-երաժշտության (ասենք՝ հայրենիքին նվիրված ու հերոսապատում տեքստերով երգերին դիմելը) գծով:

Հայրենիքը ջերմորեն սիրելու համար պետք է ամենից առաջ այն <u>լավ ճանաչել</u>: Հայրենաճանչողության, ուստի և հայրենասիրության դաստիարակման գործում հսկայական դեր են կատարում <u>աշխարհագրության</u> հետ ստեղծված

միջառարկայական կապերը: Առաջավոր ուսուցիչները լավ են իմանում, որ աշխարհագրական դիտողականությունը մեծապես նպաստում է հիշողության մեջ պատմական դեպքերի և իրադարձությունների ամրակայմանը, ուստի դասատվության ընթացքում նրանք հաճախակի են դիմում աշխարհագրության հետ ունեցած միջառարկայական կապերին:

Մարդ հայրենասիրական զգացումներով է տոգորվում ոչ միայն իր երկրի, իր ժողովրդի պատմության հերոսական դրվագներով, հայրենական գիտության, տեխնիկայի, մշակույթի և ժողովրդական տնտեսության բազմազան ճյուղերի նվաճումներով, այլև բուն իսկ հայրենի բնությամբ, բուսական ու կենդանական աշխարհով, գեղատեսիլ վայրերով: Այս առումով հայրենի բնությունը երեխայի համար կատարում է յուրօրինակ դաստիարակի, այսպես ասած, անդիպլոմ մանկավարժի դեր: Բնության դաստիարակիչ դերի մասին նշել են դասական շատ մանկավարժներ՝ Կոմենսկին, Ռուսոն, Պեստալոցին, Դիստերվեգը, Աբովյանը, Ուշինսկին և ուրիշներ: Ռուս ականավոր մանկավարժ Ուշինսկին ասում է. <<Իսկ մի՞թե բնությունը, ջուրը, բնության լայնարձակությունը, քաղաքի գեղատեսիլ շրջակայքը, բուրավետ հովիտներն ու ծփացող դաշտերը, վարդագույն գարունն ու ոսկեզօծ աշունը չեն եղել մեր դաստիարակները: Ինձ բարբարոս կոչեք մանկավարժության մեջ, բայց իմ կյանքի սովորություններից ես եկել եմ այն խոր համոզման, որ գեղեցիկ լանդշաֆտը մատաղ հոգու զարգացման գործում ունի դաստիարակչական այնպիսի հսկայական նշանակություն, որի հետ դժվար կմրցե մանկավարժի ազդեցությունը>> [9,129]: Իհարկե, դրանով Ուշինսկին չի թերագնահատում մանկավարժի դերը, այլ ընդգծում է հայրենի բնության դաստիարակիչ ներգործության հզոր ուժը:

Միջառարկայական կապերի ընդհանուր համակարգում առաջատար դեր է կատարում բնությունը՝ բառիս ամենալայն իմաստով. չկա որևէ ուսումնական առարկա, որ անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով կապված չլինի բնության հետ: Օրինակ, մայրենի լեզվի դասագրքերում լայն տեղ է տրված հայրենի բնաշխարհին նվիրված գրական նյութերին՝ հատկապես <<Ամառ>>, <<Աշուն>>, <<Ձմեռ>>, <<Գարուն>> և այլ բաժիններում: Դրանով իսկ դեռևս տարրական դասարաններում ուսուցիչը լայն հնարավորություններ է ստանում <<Մայրենի

լեզվի>> դասերին միջառարկայական բազմապիսի կապեր ստեղծելու և կրտսեր դպրոցականների մեջ սեր դաստիարակելու դեպի հայրենի բնությունը, բուսական և կենդանական աշխարհը:

Քանի որ այստեղ խոսքը հատկապես հայրենասիրության դաստիարակության մասին է, ապա հերքվում է երբեմնի մեթոդամանկավարժական այն պահանջը, որ հայրենասիրության դաստիարակության համար ուսուցչին մատնացույց էր արվում միայն «իր առարկայի նյութը»: Օրինակ, տարիներ առաջ տրվում էր այսպիսի միակողմանի հանձնարարական. <<Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իր աշակերտների մեջ հայրենասիրության զգացմունք դաստիարակի իր առարկայի նյութի հիման վրա>>:

Միտումնավոր մեջբերվեց հնամենի այդ <<մանկավարժական պատվիրանը>>, քանի որ այսօր էլ առանձին ուսուցիչներ դասատվության, դաստիարակչական աշխատանքի ընթացքում սահմանափակվում են միայն <<իրենց առարկայի նյութի>> շրջանակներով: Մինչդեռ ուսումնադաստիարակչական աշխատանքներում ուսուցիչը պետք է լայնորեն դիմի նաև միջառարկայական կապերին. ներկա դեպքում յուրաքանչյուր ուսուցիչ իր սաների մեջ հայրենասիրության զգացմունք պետք է դաստիարակի ոչ միայն <<իր առարկայի նյութի>>, այլ նաև միջառարկայական կապերի կենսագործման միջոցով, հարակից ու ոչ հարակից առարկաների նյութերի հիման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կրթված մարդկանց իսկական դաստիարակությունն ամենից առաջ մարդու, նրա հերոսական ոգու, հայրենիքին անսահման նվիրվածության, համոզմունքներին հավատարմության, հանուն մարդու երջանկության և մտքի բոլոր հարստություններին տիրապետելու պատրաստակամության և հմտության իմացությունն է»: Վ. Ա. Սուխումլինսկի

Հետազոտական աշխատանքը գրելիս եկա այն եզրահանգման, որ երեխայի հայեցի դաստիարակության գործում կարևոր դեր ունի ոչ միայն միջավայրը, ընտանիքը, դպրոցը, այլև արժեքները: Այսօր հայերիս համար սրվել է հետևյալ խնդիրը՝ ինչպես մտնել համամարդկային կյանք՝ չկորցնելով մեր մշակույթի արժեքային համակարգը, չշեղվելով ու չգնալով ազգավերացման ուղիով:

Այսօրվա դպրոցը պետք է լինի մի այնպիսի առողջ կառույց, որը ձևավորի խելացի, բանիմաց, նախաձեռնող,իր ժողովրդի արժեքները յուրացրած և այն կատարելագործելու ընդունակ շրջանավարտներ: Դպրոցում ուսումնական բոլոր առարկաները հնարավորության սահմաններում պետք է հագեցված լինեն ազգային ոգով, այսինքն հայ երեխան պետք է ամեն մի առարկայի մեջ տեսնի նաև իր ազգի ավանդը, ձեռք բերի որոշակի վերաբերմունք հայրենի գիտնականների նկատմամբ: Նորից համոզվեցի այն փաստում, որ միայն լիարժեք կրթության շնորհիվ է հնարավոր հասնել այն բանին, որ ազգն ունենա ընդհանուր կամք՝ տիրանալու իր նախնիների կերտած հայրենիքին, տեր կանգնելու իր անցյալի հաջողություններին, հաղթանակներին ու պարտություններին, իր երջանիկ ու դժբախտ օրերին՝ ունենալու ընդհանուր կամք ապագայի նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավոյան Հ. Մ., Սարգսյան Ռ.Վ., Ուսուցման պրոցեսի կատարելագործման խնդիրները, Երևան, «Լույս» 1981թ:
2. Հայ մանկավարժներ, գիրք Ա. Երևան 1958թ.:
3. Մելքումյան Մ. Ս., Միջառարկայական կապերի պրոբլեմը և հայրենասիրության դաստիարակումը, Երևան, «Լույս» 1973թ.:
4. Մելքումյան Մ. Ս, Թեզիսներ՝ «Նյութեր տարրական կրթության հարցերին նվիրված հանրապետական խորհրդակցության», Երևան 1973թ.: